

---

---

## ՄԱԿԴԻՐԸ ԸԱՖՖՈՒ «ՍԱՄՎԵԼ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

### ՌՈԼԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայտնի է, որ գեղարվեստական արձակը ոչ միայն իր ժանրային առանձնահատկություններով, այլև լեզվաոճական արտահայտությամբ բավական տարբերություններ է ցուցաբերում արձակ շարադրվող այլ ստեղծագործություններից: Գեղարվեստական խոսքի նպատակն է նպաստել ոչ միայն հաղորդակցվողների գիտելիքների, այլև նրանց հուզաշխարհի ծավալմանը, որից էլ բխում է հեղինակի՝ այդ նպատակադրմանն ուղղված լեզվատաղձի ընտրությունը:

Գեղարվեստական գրականությունը պատկերավոր խոսք է, որը Բաֆֆու կողմից ըմբռնվում է որպես աշխույժ, կենդանի ու շարժուն շարադրանք: Վիպասանն այդ մասին գրում է. «Վեպի համար հարկավոր է ընթացիկ, շարժուն կյանք յուր բոլոր երևույթներով և ոչ թե թագավորների կամ իշխանների աշխարհակալության կամ պատմության չոր ու ցամաք տարեգրություն»<sup>1</sup>: Բաֆֆու ստեղծագործություններում և մանավանդ «Սամվելում» խոսքի պատկերավորություն են ստեղծում առարկաներն ու երևույթները բնութագրող բառերը, որոնք դրվում են թե գոյականների և թե բայերի վրա՝ հետապնդելով որոշակի նպատակներ (հեղինակային վերաբերմունք, պատկերի ճշմարտացի նկարագրություն և այլն):

Խոսքի պատկերավորման միջոցներից մեկը մակդիրն է, որը, ի տարբերություն առարկայի տրամաբանական բնորոշման, ներկայացնում է նրա գեղարվեստական բնութագրությունը: Մինչև Բաֆֆու ստեղծագործությունների հանդես գալը, նման բնութագրող հատկանիշներով օժտված բառերն այնպիսի տարածում և արժեք չունեին հայ գեղարվեստական արձակում, ինչպիսին ձեռք բերեցին մեծ վիպասանի ժամանակաշրջանում, նրա գրչի տակ: Երբ լեզվական կողմից համեմատում ենք, ասենք, Ադայանի, Պոռոջանի ստեղծագործությունները Բաֆֆու վեպերի հետ, ապա նկատում ենք, որ դրանց տարբերությունները ոչ միայն լեզվի գրական նորմավորվածության մակարդակների մեջ են, այլև՝ գեղարվեստականության աստիճանի: Սա նշանակում է, որ Բաֆֆու ստեղծագործությունները պատկերավորման և արտահայտչական միջոցներով ավելի հարուստ են, քան Ադայանի և Պոռոջանի երկերի լեզուն<sup>2</sup>: Ասվածի լավագույն ապացույց են Բաֆֆու

---

<sup>1</sup> Բ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու. հ. 7, Երևան, 1956, էջ 6:

<sup>2</sup> Լեզվի պատկերավորման միջոցների մասին տե՛ս Դ. Ռոզենտալ, Մ. Թելենկովա. Практическая стилистика русского языка. М., 1976, с. 305-318; Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն, Ֆ. Հ. Խ լ դ ա թ յ ա ն. Հայոց լեզվի ոճաբանություն. Երևան, 1988, էջ 31-51, Է դ. Ջ ա բ ա շ յ ա ն, Հ. Մ ա խ չ ա ն յ ա ն. Գրականագիտական բառարան. Երևան, 1972, էջ 39-230, Ֆ. Խ լ դ ա թ յ ա ն. Ոճաբանական բառարան. Երևան, 2000, էջ 48, Լ. Ե գ ե կ յ ա ն. Ոճագիտություն. Երևան, 2003, էջ 332-369:

ստեղծագործություններում գործածված մակդիրները, որոնք գիտական գրականության մեջ բնորոշվում են որպես այնպիսի բառեր ու կապակցություններ, որոնք ունեն առարկան կամ երևույթը գեղագիտորեն բնութագրելու արժեք<sup>3</sup>:

Ընդհանուր առմամբ ստեղծագործությունների մեջ մակդիրները առանձնակի բովանդակություն են ստանում բնության տեսարանների նկարագրություններում, որտեղ ասելիքն ավելի պատկերավոր ու շոշափելի է ներկայացվում: Այսպես, «Մամվել» վեպի «Տարոնի առավոտը» հատվածում խոսքի գեղարվեստականությանը մեծ չափով նպաստել են մակդիրների տեղին ու գեղեցիկ գործածությունները, որոնք արդի ընկալմամբ թեև կարող են տրամաբանական բնութագրություններ թվալ, սակայն Ընդհանուր ապրած ժամանակաշրջանում, կարծում ենք, մակդիրային արժեք կարող էին ունենալ:

«Փոթորկային գիշերին հաջորդեց զարնանային խաղաղ, հովասուն առավոտը: Ողակյան ամրոցը շրջապատող ծառազարդ բլուրները մխում էին ձյունի պես ճերմակ գոլորշիներով: Մար ու ձոր, դար ու դաշտ պատած էին անթափանցիկ մառախուղով: Օդի մեջ լողացող ջրային շիթերը, արեգակի առաջին ճառագայթներից վառվում էին միլիոնավոր ոսկյա հուլունքների նման: Ծառերի տերևները, ցողված անձրևային կաթիլներով, կարծես սփռված լինեին գույնզգույն գոհարներով: Այդ գեղեցիկ առավոտը հիշեցնում էր այն վաղեմի, հանդիսավոր առավոտներից մեկը, երբ Աստղիկը՝ Տարոնի դիցուհին, դուրս էր գալիս Աշտիշատի տաճարներից և, շրջապատված յուր անթառամ նաժիշտներով, իջնում էր Քարքե լեռան բարձրությունից Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու: Այդ միջոցին հայոց երիտասարդ դուրսագունները թաքչում էին Աշտիշատի դիցանվեր անտառի մթին ծառաստանի մեջ, հեռվից դիտելու գեղեցիկ աստվածուհու լողարանը: Բայց Աստղիկը Մուշի ամրոցը դաշտը վարագուրում էր մառախլապատ մշուշով և յուր լողարանը անտեսանելի էր կացուցանում անհամեստ հետաքրքրություններից»<sup>4</sup>:

Ընդգծված բառերը առարկաների պատկերավոր, մյուս կողմից՝ անսպասելի բնութագրություններ են, որոնք խոսքի մեջ գեղագիտական արժեք ունեն: Այդպիսիք են «Աշտիշատի վանքը», «Պատմոս», «Անուշ բերդ», «Ռշտունիք», «Արտասուքի աղբյուր», «Արտագերս», «Արարատյան դաշտի առավոտը», «Արաքսի որոգայթները», «Ողակյան ամրոցը» և այլ գլուխներում գործածված մակդիրները, որոնք մի առանձին հմայք են տվել բնության տեսարանների ու երևույթների նկարագրություններին:

Բնարկե, մակդիրների գործածության և բնության տեսարանների նկարագրության մի անզուգական օրինակ է «Արարատյան դաշտի առավոտը»: Այդտեղ մակդիրային արժեք են ստացել առարկաների այնպիսի բնորոշումներ, ինչպիսիք են՝ լուսապայծառ առավոտ, սպիտակափայլ գագաթ, վարդագույն շողքեր, պսակաձև գագաթ, (ձյունի պես) ճերմակ մշուշ, ամոթխած հարսիկ, անթափան-

<sup>3</sup> Տե՛ս է դ. Ջր ա բ ա շ յ ա ն, Հ. Մ ա խ ջ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 187–188: Ֆ. Հ. Խ լ դ ա թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 85:

<sup>4</sup> Ը ն ճ ճ ի. Մամվել. Երևան, 1984, էջ 13–14 (այսուհետև էջերը կնշվեն մեջբերումներին կից):

ցիկ շղարշ, վաղորդյան մարգագետիններ, սքանչելի ալեկոծություն և այլ ձևեր, որոնք անկրկնելի գունային երանգներ են տալիս հաստվածին ու շոշափելի դարձնում բնության նկարագրությունը:

Բաֆֆու ստեղծագործություններում մակդիրներն ու առարկաների տրամաբանական որոշիչներն ունեն ոչ միայն գեղագիտական, գեղարվեստական, այլ նաև տվյալ իրադրության նկատմամբ երկի հերոսի կամ հեղինակի կողմից դրսևորվող որոշակի վերաբերմունքի (դրական կամ բացասական) արժեք: Այսպես, բնության տեսարանների շատ նկարագրություններում պարզորոշ երևում է, որ Բաֆֆին չի կարող թաքցնել իր հիացական վերաբերմունքը հայրենի լեռնաշխարհի գեղեցկությունների նկատմամբ և այդ վերաբերմունքն արտահայտել է գեղեցիկ մակդիրների գործածության միջոցով: Այսպես. «Փոթորկային գիշերին հաջորդեց գարնանային խաղաղ, հովասուն առավոտը. Ողական ամրոցը շրջապատող ծառազարդ բլուրները մխում էին ձյունի պես ձերմակ գոլորշիներով» (13): «Աշտիշատի վանքից շատ հեռու չէր Ողական ամրոցը. նա կանգնած էր Քարքե լեռան ապառաժների վրա և խրոխտ, վեհապանձ դեմքով նայում էր դեպի յուր ստորոտով հոսող Արածանիին» (15): «Ահա կրկին վեհափառ Արածանին ու հայոց սրբազան Գանգեսը» (60): «Այնտեղ, ծովակի ալեծուփ գրկում հանգչում է տենչալի կղզին ու անմատչելի Աղթամարը, և այդ կղզու խաղաղ, մնջիկ առանձնության մեջ, որպես ծովակի դիցուհի, իշխում է Մամվելի նագելին» (110): Ընդգծված մակդիրները ոչ միայն առարկաների գեղեցիկ, անսպասելի բնութագրություններ են, այլև հեղինակի հիացական վերաբերմունքն արտահայտող բառեր:

Մակդիրների և տրամաբանական որոշիչների միջոցով հեղինակն արտահայտում է նաև բացասական վերաբերմունք առարկայի կամ երևույթի նկատմամբ: Այսպես, «Որպես մի այլանդակ հրեշ, լի ամենայն զարհուրանքով, կանգնած էր Անուշ բերդը յուր բարձր, քարեղեն ստորոտի վրա (213): «Եվ նա, որպես մի կղզիացած պատիժ ու պատուհաս, ապրում էր յուր մռայլ, դժոխային առանձնության մեջ» (213): «Տիրում էր խորին, մահահրավեր լռություն» (216) և այլն:

Մակդիրներն առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հերոսների արտաքին և ներքին հատկանիշները, նրանց հոգեվիճակները բնութագրելիս<sup>5</sup>: Դիմենք փաստերի: Մամվելը աղետալի լուրեր է ստանում Տիգրանից և գնում է սպարապետ Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղ Մամիկոնյանին տեսակցելու: Մուշեղը սպասման մեջ է: Այդ հոգեվիճակը ներկայացնելիս Բաֆֆին գործածում է մի շարք մակդիրներ, որոնք իրենց էությամբ համապատասխանում են նման իրավիճակի նկարագրությանը. «Միայն մի սենյակի լուսամուտների թանձր վարագույրների հետևից, աղոտ լույս էր երևում (40): «Մի տղամարդ, անհանգիստ կերպով երբեմն անցուդարձ էր անում սենյակի մեջ, երբեմն նստում էր բազմոցի վրա, և նրա անհամբեր աչքերը դառնում էին դեպի դուռը» (40):

Բերված օրինակներում թանձր, աղոտ, անհամբեր մակդիրները տվյալ կապակցություններում համապատասխանում են հերոսների հոգեկան այն ապրումներին, որ ներկայացնում է հեղինակը: Այդպիսիք են նաև դառը ժպիտ (68),

<sup>5</sup> Տե՛ս Լ. Ե գ է կ յ ա ն. Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը. Երևան, 1975, էջ 178-183:

բորբոքված սիրտ (100), մռայլ ճակատ (107), հուզված ճակատ (126), արյունոտ ճառագայթներ, արյունոտ գործ (273), տառապյալ աչքեր (283), գերեզմանական լռություն (286), թախծալի լուսավորություն (347), մռայլ լուսավորություն (350), ահարկու բանակ, ահարկու տեսարաններ (410) և այլն:

Նույն ձևով հետևյալ մակդիրները իրենց իմաստներով դարձյալ համապատասխանում են այն իրավիճակներին, որտեղ հեղինակը նկարագրում է հաճելիության մթնոլորտ: Այսպես՝ թովիչ գորություն (35), կախարդիչ հրապուրանք (35), վեհափառ Արածանի, սրբազան Գանգես (60), մանուկ սիրտ, մրկածուփ ջերմություն (86), կրակոտ պատանի (106), բոցավառ աչքեր (127), ոսկեճաճանչ արեգակ, փառավոր խույր (305), հոլանի բազուկներ (321), ոգելից խոսքեր (322), լուսապայծառ առավոտ (394), սպիտակափառ գազաթ (394) և այլն:

Հայոց Փառանձեմ թագուհու նկատմամբ ունեցած հիացական վերաբերմունքը հեղինակն արտահայտում է ահա այսպիսի մակդիրներով. «Պարանոցին կրում էր նույնպես գոհարագարդ մանյակ, որից քարշ էր ընկած արքայական լանջից պատիվը, որը ճաճանչավոր լուսնի ձև ուներ և հանգչում էր փառավոր կրծքի վրա: Հուլանի բազուկները զարդարված էին ոսկյա ապարանջաններով, իսկ աջ ձեռքին, ձկնորթի վրա, փայլում էր թագուհու հատուկ մատանին: Նա հազել էր ծիրանի պարեգոտ, որ երկար և մեղմ ալիքներով իջնում էին մինչև ոտները, որ կրում էին նախշուն, մարգարտահյուս մաշիկներ» (121): Ինչպես երևում է, ընդգծված բոլոր մակդիրներն ունեն վեհություն, հիացմունք արտահայտելու իմաստ, որն էլ հենց հեղինակի առաջադիր նպատակն է եղել:

Ահա, մի օրինակ ևս, որտեղ հեղինակը նույն պարբերության մեջ՝ մակդիրների միջոցով տարբեր բնութագրումներ է տալիս մեզ համար անհաճո և հաճելի մարդկանց՝ Շապուհ արքային և հայոց թագուհի Փառանձեմ տիկնոջը. «Նշանակված օրը, ամբարտավան թագավորը միայնակ, և միայն Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի առաջնորդությամբ մոտեցավ բերդի ստորոտին:...Այդ միջոցին աշտարակի վրա, շրջապատված յուր նախարարներով, հայտնվեց թագուհին: Բարձրահասակ, վայելչագեղ տիկինը, յուր ավագների խմբի մեջ հանդիսանում էր որպես մի հրաշավառ աստվածուհի» (317):

Բերված օրինակները ցույց են տալիս, որ մակդիրների գործածության խնդրում Բաժնի բավական բծախնդիր է եղել, և դրանց ընտրությունը կատարվել է որոշակի սկզբունքով. խոսքը կառուցել այնպես, որ մակդիրների արտահայտած իմաստները համապատասխանեն նկարագրվող իրավիճակներին:

Հեղինակի ստեղծագործական ոճին բնորոշ իրողություն կարելի է համարել նաև այն, որ, երբեմն ասելիքի պատկերավորությունն առավել ընդգծելու նպատակով, նա խոսքային տարբեր իրավիճակներում գործածում է այնպիսի մակդիրներ, որոնք իրենց իմաստներով չեն համընկնում ներկայացվող իրադրությունների՝ ընթերցողի վրա թողած ազդեցությանը: Երբեմն տխուր կամ ոչ հաճելի հոգեվիճակներ նկարագրելիս Բաժնի իր խոսքում գործածում է ընթերցողների հոգում դրական, հաճելի զգացմունքներ արթնացնող մակդիրներ, որոնցով ստեղծվում են հակադրություններ՝ ասելիքի բովանդակության և մակդիրի ար-

տահայտած ընդհանուր իմաստի միջև: Ահա մի օրինակ, որտեղ պարզ երևում է, թե հեղինակը ընթերցողի մեջ դրական ինչպիսի զգացմունքներ արթնացնող մակդիորներ է շոայլում հայ ազգին այդքան թշվառություններ պատճառած դավաճան Մերուժան Արծրունուն. «Այդ միջոցին հրապարակի վրա հայտնվեցավ սպիտակ ձիավորը՝ Մերուժանը: Դարձյալ վեհապանձ շուքով, դարձյալ նրա ահարկու գենքն ու գրահը փայլում էին դյուցազնական փառքով» (481): Այստեղ տխրության, դառնության հոգեվիճակ արտահայտող ընդհանուր խոսքաշարից միանգամից ուշադրության են արժանանում մակդիորները և մշտապես մնում ընթերցողի հիշողության մեջ, որպես առարկաների անսպասելի բնութագրումներ:

Բաֆֆու ոճի մեջ մակդիորներն առանձնակի ցցուն են հանդես գալիս նաև այն դեպքում, երբ հեղինակը ոճական հնարների կիրառմամբ հակադրություն է ստեղծում մակդիորների արտահայտած իմաստներից և բնագրի՝ ընթերցողի վրա թողած ազդեցությունից բխող հոգեվիճակների միջև: Այսպես՝ հեղինակը այդ եղանակով հակադրություն է ստեղծում Հայաստան աշխարհի բնության սքանչելի պատկերների և այդ հրաշագեղ աշխարհում բնակվող մարդկանց դժբախտ ճակատագրերի միջև: Այդպիսին է «Տարոնի առավոտը», որտեղ հեղինակը գործածել է հետևյալ մակդիորները՝ հովասուն առավոտ, անթափանցիկ մատախտուղ, հանդիսավոր առավոտ, անթառամ նաժիշտներ, դիցանվեր անտառ, մթին ծառաստան, անհամեստ հետքրքրություն, լեռան կանաչագարդ շղթա, մոայլ անտառներ, մոայլ ժողովուրդ, լուսապայծառ առավոտ, խորին անդորրություն, ահռելի ամբողջ, վեհապանձ դեմք, վերամբարձ կատարներ, որոնք ընթերցողի հոգում հաճելի զգացմունք արթնացնող գեղեցիկ մակդիորներ են:

Այսպիսի մակդիորներով բնութագրվող Տարոնի գեղեցիկ առավոտի ու բնության նկարագրությունը նախորդում է «Գուժկան» գլխին, որտեղ հեղինակը ներկայացնում է մի պատմություն, որից տեղեկանում ենք Վահան Մամիկոնյանի ու Մերուժան Արծրունու հավաստափոխության և, պարսկական բանակներով, Հայաստան արշավելու մասին: Այս բոթը միանգամից հանգցնում է ոգևորության բորբոքված այն հուրը, որն ընթերցողը ստացել էր նախորդ գլխից:

Նման հնարանքով է շարադրված նաև «Արարատյան դաշտի առավոտը» գլուխը: Այստեղ նույնպես բնության սքանչելի նկարագրությանը, որը ընթերցողի մեջ առաջացնում է ոգևորություն, հիացում, անսահման սեր՝ դեպի այդ բնությունը, հաջորդում են անդամահատված, խեղված ու արյան մեջ գալարվող մի ժողովրդի ցավալի պատկերներ: Ահա այդ հատվածը. «Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը:

Արնի առաջին ճառագայթների ներքո Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողերով, որ այք էին շլացնում: Արագածի պսակաձև գագաթը չէր երևում: Նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես մի ամութիսած հարսիկ, որ սքողում էր յուր դեմքը անթափանցիկ շղարշով: Կանաչագարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվոտում էր ծիածանի ամենանուրբ գույներով: Փշում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար

խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծությամբ:

*Գեղեցիկ էր այդ առավոտը» (394):*

Նկարագրությանը հաջորդում են ծխի մեջ կորած, ավերված քաղաքների ու գյուղերի պատկերները, որոնց հակադրությամբ հատվածում ընդգծված մակդիրներն ավելի վառ ու շոշոփելի են ներկայացնում առարկաների բնութագրությունները:

Մակդիրների գործածության կապակցությամբ անդրադառնանք Բաֆֆու ոճին բնորոշ մի երևույթի ևս: Հեղինակը երբեմն տվյալ նախադասության կազմում նույն կամ հարանուն բառերով ձևավորված մակդիրը գործածում է տարբեր առարկաներ բնութագրելու նպատակով, և դրանով ստեղծվում է մակդիրի կրկնություն, որով ասելիքն ավելի ընդգծված, ավելի գեղագիտական է ներկայանում: Նման դեպքերում ընթերցողի ուշադրությունը կենտրոնանում է կրկնվող միավորներից երկրորդի վրա: Օրինակ՝ «Շատ չանցավ, արևի առաջին արյունագույն ճառագայթները հանդիպեցան մի արյունոտ գործի... (273): «Երևում էին Քարքե լեռան բարձրությունները իրենց մթին ծմակներով և մռայլ անտառներով, որոնք իրենց անմատչելի թավուտների մեջ սնուցանում էին մի մռայլ ժողովուրդ» (14): «Արևը բարձրացավ, և որքան բարձրանում էր նա, այնքան նրա պայծառ լուսավորության ներքո երևան էին գալիս ահարկու բանակի ահարկու տեսարանները» (410):

Բերված օրինակներից երևում է, որ կրկնվող մակդիրներն ավելի ցայտուն, ավելի գեղագիտական են ներկայացնում ասելիքը, իսկ դրանցից երկրորդները ասելիքի հիմնական բեռը կրող միավորներ են, որոնք մտքի տրամաբանական շեշտը վերցնում են իրենց վրա:

Այսպիսով՝ Բաֆֆին իր ստեղծագործություններում մակդիրների գործածությամբ մի անգամ ևս բացահայտում է արևելահայ աշխարհաբարի գեղագիտական ներքին հնարավորությունները:

## ЭПИТЕТ В ИСТОРИЧЕСКОМ РОМАНЕ РАФФИ «САМВЕЛ»

РОЛАНД АВЕТИСЯН

### Резюме

Эпитет – выразительное средство, используемое в армянской литературе, как на горах, так и в среднеармянском и ашхарабаре. Использование эпитета в современном нормированном восточноармянском языке наиболее ярко проявилось у Раффи, в частности, в историческом романе «Самвел», где эпитет послужил мощным средством выявления внутренних эстетических возможностей армянского языка, еще раз подчеркнув его огромное образное богатство.